ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511703, 511711

ՎԴ - _____

«20» մարտի 2020թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԻՆ

Ձեր կողմից 2020 թվականի փետրվարի 7-ին կայացված՝ թիվ ԵԴ/1971/02/20 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշման կապակցությամբ (որպիսի գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 13.03.2020 թվականին) հարկ եմ համարում արձանագրել հետևյալ հարցադրումները և քաղաքացիադատավարական կարգավորումների վերլուծության արդյունքում կատարել համապատասխան եզրահանգումներ.

1. արդյո՞ք թիվ ԵԴ/1971/02/20 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշքարյան) (այսուհետ՝ Դատարան) և Հայաստանի Հանրապետության մեկ այլ առաջին ատյանի դատարանի միջև առկա է ընդդատության կամ ենթակայության մասին ծագած վեճ,

2. արդյո՞ք թիվ ԵԴ/1971/02/20 քաղաքացիական գործով առկա են անհրաժեշտ և բավարար փաստական հանգամանքներ և կատարված դատավարական գործողություններ, որոնք Վճռաբեկ դատարանի նախագահին թույլ կտան կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իրավակարգավորումները և լուծել ընդդատության մասին ենթադրաբար ծագած վեճը,

3. արդյո՞ք իրավունքի զարգացման անհրաժեշտությունը որպես առանձին հիմք կարող է հանդես գալ առաջին ատյանի դատարանների կողմից՝ ընդդատության կամ ենթակայության դատավարական ինստիտուտների կիրառման հետ կապված հարցերով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու համար,

4. ինչպե՞ս սույն քաղաքացիական գործով հաղթահարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ընդդատության հատուկ կանոնի կիրառման խնդիրը, մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը:

Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 25-րդ հոդվածի համաձայն.

1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

2. Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

3. Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

4. Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

5. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն.

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սննդկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն ընդդատության մասին ծագած վեճը լուծելու նպատակով Վճռաբեկ դատարանի նախագահին կարող են դիմել միայն հետևյալ դատավարական գործողությունները գործով կատարված լինելու վերաբերյալ հանգամանքները հստակ արձանագրելու դեպքում.

ա) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում պետք է ստացված լինի քաղաքացիական հայց, որը դատարանը պետք է ընդունած լինի վարույթ, այսինքն՝ առկա լինի քաղաքացիական գործ,

բ) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության մեկ այլ առաջին ատյանի դատարանի քննության հանձնելու հարց կարող է քննարկել, եթե գործը քննելիս պարզել է, որ այն վարույթ է ընդունվել. ա) Օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ, բ) այն ենթակա է քննության սննդկության դատարանում, գ) Օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը կարող է հանձնել այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկել է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ,

գ) նախորդ կետում նշված փաստական հանգամանքների առկայության և դատավարական գործողությունների կատարված լինելու դեպքում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կարող է իրավաչափորեն գործը հանձնել մեկ այլ դատարանի քննության,

դ) գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Թիվ ԵԴ/1971/02/20 քաղաքացիական գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ «Արդշինբանկ» ԲԲԸ-ն 23.01.2020թ. դիմում է ներկայացրել Դատարան՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի 17.07.2019թ. Երևան քաղաքում կայացված և 01.08.2019թ. կողմերի համար պարտադիր դարձած թիվ 15-4087/19 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին: Դիմումում, որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք, նշվել են Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանը, Սամվել Մանասյանը:

Դատարանը 07.02.2020թ. կայացրել է գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշում հետևյալ հիմնավորմամբ.

«Դատարանը գտնում է, որ առկա է տվյալ քննարկվող ինստիտուտի կարգավորումների շուրջ իրավունքի զարգացման խնդիր, հաշվի առնելով ՀՀ գործող օրենքի պահանջը, ըստ որի՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է հաճախորդի բնակության վայրի առաջին ատյանի դատարան, իսկ մյուս կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նման իրավակարգավորող նորմի բացակայությունը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը»:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները համադրելով սույն քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ կարելի է հստակորեն արձանագրել հետևյալը.

ա) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության որևէ դատարան սույն քաղաքացիական գործը չի ընդունել վարույթ, գործը քննելիս չի եկել եզրահանգման և կայացրել որոշում, որ այն պետք է հանձնի Դատարանի քննությանը,

բ) Դատարանում սույն քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության այլ դատարանից չի ստացվել տարածքային ընդդատության կամ ենթակայության կանոններով: Հետևաբար, պարզ չեն նաև Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով ղեկավարվելու և որոշում կայացնելու հիմքում ընկած փաստական հանգամանքները, քանի որ դրանք գործում բացակայում են,

գ) սույն քաղաքացիական գործով առկա չէ Դատարանի և Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի որևէ այլ դատարանի միջև տարածքային ընդդատության կամ ենթակայության մասին ծագած վեճ,

դ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումից հետևում է, որ Օրենսդիրը հստակ սահմանել է տարածքային ընդդատության կամ ենթակայության կապակցությամբ հնարավոր վեճի ծագման և դրա լուծման գործընթացին վերաբերող ամբողջ իրավական ընթացակարգը, և իրավունքի զարգացման անհրաժեշտությունը որպես առանձին հիմք՝ ընդդատության կամ ենթակայության դատավարական ինստիտուտների կիրառման հետ կապված հարցերով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու համար սահմանված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները՝ տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցի քննարկումը և լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու օրենսդրական հիմքը:

Այժմ ցանկանում եմ ստորև վերլուծել սույն գրությամբ արձանագրված չորրորդ հարցադրման հիմքում ընկած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, քաղաքացիադատավարական և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

նախադեպային իրավունքի վերաբերելի իրավակարգավորումները և մեկնաբանությունները:

Այսպես.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ

իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (տե՛ս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57):

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատության կանոնները, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, ***եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:***

Օրենսգրքի 336-րդ հոդվածի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով վարույթներն իրականացվում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

Օրենսգրքի 337-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է հաճախորդի բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. հաճախորդ՝ ֆիզիկական անձ, որն օգտվում է Կազմակերպության ծառայություններից կամ դիմում է դրանցից օգտվելու համար: (...):

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան:

Ընդհանուր տարածքային ընդդատության հիշյալ կանոնի հիմքում դրվել է շահի սկզբունքը, ըստ որի՝ իր իրավունքների պաշտպանության մեջ շահագրգռված անձը հայցը հարուցում է այն դատարան, որի իրավասության տարածքում հաշվառված է (գտնվում է) պատասխանողը:

Նշված տրամաբանությամբ տարածքային ընդդատության կանոնի սահմանումն արդարացված է, քանի որ հայցի հարուցումն ինքնին չի նշանակում, որ պատասխանողն իրոք խախտել կամ վիճարկում է հայցվորի իրավունքը և նրան անպայման պետք է պարտադրել ներկայանալու հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան:

Հայցվորի իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության նկատառումներով հարուցված գործի վարույթում վերջինս էլ պետք է կրի դրանից առաջացող հնարավոր դժվարությունները:

Ամբողջ վերոգրյալը փաստում է այն մասին, որ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի սահմանումը ինքնանպատակ չէ և կոչված է սահմանելու երաշխիքներ՝ հայցվորի նախաձեռնությամբ հարուցված գործի վարույթում պատասխանողի հնարավոր դժվարությունները կանխելու համար:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ընդհանուր տարածքային ընդդատության կանոնը սահմանել է դիսպոզիտիվ նորմով և հնարավորություն է նախատեսել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ կանոններ նախատեսված լինելու դեպքում կիրառել այդ կանոնները և այդ կանոններին համապատասխան՝ բացի պատասխանողներից, առանձնացնել դատավարության այլ մասնակիցների, որոնք պետք է օրենսդրական երաշխիքներ ստանան իրենց մասնակցությամբ դատական գործի հնարավոր անհարմարություններից և դժվարություններից:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի համատեքստում, ընդհանուր տարածքային ընդդատության կանոններ են սահմանված նաև նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է հաճախորդի բնակության վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, հարկ է նշել, որ օրենսդիրը չի կարևորել հաճախորդի դատավարական կարգավիճակը և անկախ նրանից, թե վերջինս

ինչպիսի դատավարական կարգավիճակով է մասնակցելու գործի քննությանը, իմպերատիվ նորմով սահմանել է, որ գործի քննությունը պետք է իրականացնի հենց հաճախորդի բնակության վայրի առաջին ատյանի դատարանը:

Այսինքն, տվյալ տեսակի գործերի համար օրենսդիրն առանձնացրել է հաճախորդին՝ որպես իր դեմ հարուցված գործի հնարավոր դժվարություններից օրենսդրական երաշխիքներով օժտված անձի:

Այդուհանդերձ, այն բոլոր դեպքերում, երբ գործով առկա է դիմումը հաճախորդի բնակության վայրի առաջին ատյանի դատարան ներկայացնելու իրավական հնարավորության բացակայություն և վիճարկվում է Հայաստանի Հանրապետությունում գործող ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, դրա կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթում ներգրավված է լինում նաև ֆինանսական համակարգի հաշտարարը՝ կարելի է դիտարկել այդ գործերի՝ ֆինանսական համակարգի հաշտարարի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարանի կողմից գործի հետագա քննությունն իրականացնելու հնարավորության հարցը:

Առդիր՝ վերադարձվում է թիվ ԵԴ/1971/02/20 քաղաքացիական գործը՝ բաղկացած 46 թերթից:

Հարգանքով՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ